600.0111.23.04.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

23 ապրիլի 2019 թվականի №111Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի №283Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՖԻՐՄԱ Գ. Ա. Խ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի մարտի 27-ի, ապրիլի 4-ի, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2019 թվականի ապրիլի 10-ի №488 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հունիսի 22-ի «ՖԻՐՄԱ Գ. Ա. Խ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Գետափ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №283Ա՝
   1) որոշման 1-ին կետում «Շաղատ համայնքի վարչական տարածքում՝ Արագլիգետ գետի վրա» բառերը փոխարինել «Սիսիան համայնքի վարչական տարածքում (գյուղ Շաղատ)՝ Որոտան գետի Արագիլիջուր վտակի և նրա Զախակողմյան վտակի վրա» բառերով.
   2) որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի՝
   ա. 3-րդ կետի 1-ին ենթակետում «մինչև 2019 թվականի ապրիլի 26-ը» բառերը փոխարինել «մինչև 2019 թվականի ապրիլի 24-ը» բառերով.
   բ. 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Լիցենզավորված գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը (գործունեության վայրը) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքն է (գյուղ Շաղատ)՝ Որոտան գետի Արագիլիջուր վտակի և նրա Ձախակողմյան վտակի վրա (բնական ջրահոսք):».

գ. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 3750 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է բացառապես հետևյալ ագրեգատներով (սարքավորումներով)՝

1) հիդրոտուրբին №1՝ ՇՇ 120-24-50, 750 կՎտ, 2006թ.,
2) գեներատոր №1՝ ՍԳ-2-750, 750 կՎտ, արտադրության տարեթիվ՝ 1965թ., վերանորոգման տարեթիվ՝ 2017թ.,
3) հիդրոտուրբին №2՝ Р-1100/155, 1100 կՎտ, արտադրության տարեթիվ՝ 1974թ., վերանորոգման տարեթիվ՝ 2017թ.,
4) գեներատոր №2՝ ՍԳ-2-1000-16-ՈՅ3, 1000 կՎտ, արտադրության տարեթիվ՝ 1974թ., վերանորոգման տարեթիվ՝ 2017թ.,
5) հիդրոտուրբին №3՝ Р-2250/310, 2250 կՎտ, 2017թ.,
6) գեներատոր №3՝ ՍԳ-2-2000, 2000 կՎտ, 2017թ.:»:

2. «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2018 թվականի հունիսի 11-ի №O.AB.100.11CB.ESC.2.2889.18 գրությամբ ներկայացված բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած 6,822,500 (վեց միլիոն ութ հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի ապրիլի 24-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
23 ապրիլի 2019թ.